ԵՊԲՀ ՔՈՒԵՋԻ «ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների մասնակցություն 116 (100%)

Հարցմանը մասնակցել է 116 ուսանող (100 %), ինչը թույլ է տալիս կատարել հիմնավորված գնահատականներ:

1. **Նշեք որ կուրսում եք սովորում**



2. **Ձեր միջին առաջադիմությունը՝**



3. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած տեսական գիտելիքներով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գրաֆիկներում գերակշռում են բարձր միավորները, ինչը վկայում է ընդհանուր բավարարվածության մասին: Սակայն առկա է նաև ցածր և միջին միավորներ, ինչը ցույց է տալիս, որ ուսանողների մի մասը տեսական նյութի լիարժեք յուրացման հարցում դժվարություններ ունի:

4. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած գործնական հմտություններով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գործնական հմտություններից բավարարվածությունը ավելի ցածր է, քան տեսական գիտելիքներից: Սա ցույց է տալիս, որ գործնական բաղադրիչը չի բավարարում ուսանողների ակնկալիքները

5. **Մասնագիտական առարկաների ուսումնասիրման ժամանակ բավարար չափով հասանելիություն ունեցել եք անհրաժեշտ գործիքների, տեխնիկական միջոցների, նյութերի** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ հասանելիություն չեմ ունեցել, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գրաֆիկական տվյալները ցույց են տալիս մասնագիտական առարկաների ուսումնասիրման

ընթացքում անհրաժեշտ գործիքների, տեխնիկական միջոցների և նյութերի հասանելիության ցուցանիշից միջին բավարարվածություն: Այս ցուցանիշը ամբողջությամբ համընկնում է բաց պատասխանների հետ, որտեղ բազմիցս նշվել է.

- լաբորատոր սարքավորումների չօգտագործում,
- գործնական փորձերի բացակայություն,
- նյութերի և տեխնիկայի սահմանափակ հասանելիություն:

6. **Որքանով եք բավարարված անհրաժեշտ գրականության հասանելիությամբ** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Ցուցանիշը համեմատաբար կայուն է և միջինից բարձր բավարարվածությամբ, սակայն կարելի է դիտարկել մասնագիտական գրականության արդիականացման հարցը:

7. **Որքանով լիարժեք** և **արդյունավետ են օգտագործվում դասաժամերը դասախոսների կողմից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ ոչ լիարժեք և անարդյունավետ, 5-ը՝ լիարժեք և արդյունավետ)



Գրաֆիկներում կան բարձր գնահատականներ,սակայն առկա է նաև միջին և ցածր գնահատականների շերտ: ՈՒսանողների բաց պատասխանները բացատրում են պատճառները.

- ծանրաբեռնված դասացուցակ (օրական 4–5 դաս),
- երկար դասաժամեր,

8. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված հանրակրթական առարկաների դասավանդման որակից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



9. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված մասնագիտական առարկաների դասավանդման որակից (**գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ**)**



8րդ և 9րդ գրաֆիկների տվյալները ցույց են տալիս, որ մասնագիտական առարկաները գնահատվում են ավելի բարձր, քան հանրակրթականները: Հետևաբար, ուսանողները բարձր են գնահատում մասնագիտական ուղղվածությունը և ակնկալում են դրա խորացում: Սակայն բաց պատասխաններից երևում է,որ քիմիայի բլոկը առանձնանում է որպես խնդրահարույց:Սա համակարգային խնդիր է, քանի որ քիմիան տվյալ ծրագրում հիմնարար առարկա է:

10. **Ինչը** և **ինչպես կփոխեիք ուսումնական գործընթացը առավել լավը** և **արդյունավետ դարձնելու համար** (եթե առաջարկը վերաբերվում է կոնկրետ առարկային/ամբիոնին, նշեք առարկայի անվանումը , խնդիրը և/կամ առաջարկությունը):

Սույն հարցին պատասխանել է 42 ուսանող, որոնց պատասխաններն առանց խմբագրման ներկայացված են հավելված 1ում

Ուսանողների առաջարկների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ հիմնական միտումները.

- **Գործնական բաղադրիչի պակաս (ամենահաճախ նշված խնդիրը)**
  Ուսանողները պահանջում են ավելացնել լաբորատոր փորձերը և հիվանդանոցային պրակտիկաները: Նշվում է, որ առկա սարքավորումները լիարժեք չեն կիրառվում:
- **Քիմիայի դասավանդման խնդիրներ**
  Բազմաթիվ դժգոհություններ կան քիմիայի ամբիոնի աշխատանքից՝ դասավանդման մեթոդիկայի, թեստերի և լաբորատոր փորձերի բացակայության վերաբերյալ: Առաջարկվում է վերանայել դասախոսական կազմը և դասավանդման մեթոդները:
- **Ծանրաբեռնված դասացուցակ**
  Օրական 4–5 դաս, ոչ մասնագիտական առարկաների մեծ ծավալ և առարկաների ոչ արդյունավետ հաջորդականություն:
- **Մեթոդական** և **կազմակերպչական բարելավման անհրաժեշտություն**
  Առաջարկվում է

✓ ավելացնել երիտասարդ դասախոսների քանակը,
✓ ապահովել հստակ ուսումնական նյութեր,
✓ բարձրացնել դասերի ինտերակտիվությունը,
✓ բարելավել կազմակերպվածությունը:

- **Ռեսուրսների հարցեր**
  Գրականության, տեխնիկական միջոցների և լսարանների հասանելիության պակաս:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կրթական ծրագիրը գնահատվում է դրական, հատկապես մասնագիտական ուղղվածությունը: Սակայն առկա են համակարգային խնդիրներ, որոնք էապես ազդում են ուսանողների բավարարվածության մակարդակի վրա:

Առավել խնդրահարույց ոլորտներն են՝

- Քիմիայի ամբիոնի դասավանդման որակը,
- Գործնական բաղադրիչի անբավարար զարգացվածությունը,
- Դասացուցակի ծանրաբեռնվածությունն ու կազմակերպչական թերությունները:

Առաջարկություններ «Լաբորատոր ախտորոշում» ծրագրի բարելավման համար

Կրթական ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսանողների հետադարձ կապի վերլուծության արդյունքում առաջարկվում է իրականացնել հետևյալ քայլերը՝

1. Լաբորատոր աշխատանքների, գործնական դասերի և փորձերի ավելացում
2. Քիմիայի և հիմնարար գիտությունների դասավանդման արդյունավետության բարձրացում
3. Ուսումնական ծանրաբեռնվածության օպտիմալացում
4. Մասնագիտական ուղղվածության ուժեղացում
5. Լաբորատոր սարքավորումների և ուսումնական ռեսուրսների ակտիվ օգտագործում

Ստորև ներկայացվում է 42 ուսանողների պատասխաններն առանց խմբագրման

1. Խստություն
2. Գործնական դասերը կավելացնեի
3. Օրինակ մեծ մասը առարկաներից որոնք շատ կարևոր են վատ են դասավանդում, քիմիայի ամբիոնը ահավոր է
4. Դասաժամերը կպակասեցնեմ , որոշ ոչ մասնագիտական առարկաները կհանեմ
5. Կցանկանայի ավելի շատ գործնական աշխատանք կատարել:
6. խստությունը
7. Փոխելու ոչինչ չեմ տեսնում, և ԵՊԲՀ-ում և Հերացի ավագ դպրոցում, քոլեջի 1-ին կուրսի ուսանողների համար դասերը կազմակերպվում են հնարավոր լավագույն ձևով, և ամենակարևորը ուսուցիչ/դասախոսները միշտ փորձում են մտնել ուսանողի դրության մեջ, անհատական մոտեցում ցուցաբերելով յուրաքանչյուրին.
8. Ընդհանուր առմամբ գոհ չեմ քիմիայի ամբիոնից(թե օրգանական,թե անօրգանական),դասախոսները գրեթե ոչինչ չէին անում դասի ժամանակ,կուզեի այս խնդիրը լուծում ստանար
9. Ընդհանուր առմամբ լավ կլիներ, որ դասախոսական կազմում երիտասարդ դասախոսներ լինեն, քանի որ մենք իրենց հետ կարողանում ենք լեզու գտնել, ու իրենց մեթոդիկան ուսանողներին ներգրավում է դասընթացի մեջ: Հայոց լեզվի ամբիոնում խնդրում ենք փոխել ամբիոնի վարիչին ու հիմնական դասախոսական կազմը, քանի որ այդ ամբիոնում ուշադրություն է դարձվում երկրորդական բաներին (օրինակ՝ բոլորի վերարկուները կախված լինեն, սեղանին շշեր չլինեն և այլն), բայց երբեք ուշադրություն չի դարձվում դասի արդյունավետությանը, հաճախ դասախոս չի լինում և ազատ ենք մնում: Ու չնայած նրան, որ դասը երբեք նորմալ չի կազմակերպվում՝ միևնույնն է, ամբիոնի վարիչը միշտ շրջում է լսարաններով և հիշեցնում, որ այդ ամբիոնը ամենակազմակերպված ամբիոնն է: Դասախոսը չի կարողանում կառավարել լսարանի ուշադրությունը. բարկանալով, ստիպելով երբեք մարդկանց հետ լեզու չեն գտնում: Քիմիայի ամբիոնում մեզանից պահանջում են ավելին, քան սովորեցնում են: Բացի պարապող ուսանողներից՝ ոչ մի ուսանող քիմիա նորմալ չի հասկանում, մանավանդ որ մեր դասախոսը համարյա դասի չի գալիս, ու ամեն անգամ գալիս են ու մեզ ինչ-որ թեստեր են տալիս գրելու դասի ընթացքում: Թեստերն էլ շատ խառն են կազմում, զաչոտների ժամանակ այնպիսի խառը թեստեր են բաժանում, որ կեսը անցած ենք լինում, կեսը՝ ոչ (նենցա անցածներն էլ չենք հասկանում, համարյա ոչ ոք չի կարողանում էնպես բացատրել, որ լրիվ հասկանանք): Խնդրում ենք փոխել դասախոսական կազմը, շատացնել երիտասարդ դասախոսներին, ինչքան երիտասարդ են՝ այնքան հասկանալի և մատչելի են բացատրում թեման: Աշխարհագրության ամբիոնում ընդհանրապես ոչ մի

ուսանող դասով հետաքրքրված չի, մանավանդ որ դասերը շատ միապաղաղ են անցնում: Շնորհակալ կլինենք, եթե հաշվի առնեք մեր կարծիքները:

10. Առավել լավը և արդյունավետ դարձնելու համար,գնալ տարբեր հիվանդանոցներ և մասնակցել պրակտիկաների,որպեսզի ընտրված մասնագիտությունը ավելի հետաքրքիր և ուսուցողական լինի:
11. Ի տարբերություն մյուս կուրսերի՝ մենք քիմիայի ժամերին դեռևս ոչ մի գործնական փորձ չենք կատարել, թեև լաբորատորիայում առկա են բոլոր անհրաժեշտ սարքավորումները: Կցանկանայինք ավելի շատ կիրառել դրանք գործնականում:107-9
12. Դեղագիտական քիմիայի ամբիոնում օրգանական և անալիտիկ քիմիաները չեն ապահովում բավարար գիտելիք իրենց կազմած թեստերին համապատասխան:Շնորհակալություն
13. Ավելացնել գործնական դասընթացները
14. Առաջարկում եմ շաբաթական ուսումնական ցիկլում թույլատրելի բացակայությունների քանակը ավելացնել մեկով: Միևնույն ժամանակ, նպատակահարմար եմ համարում գործնական պարապմունքների քանակի ավելացումը, քանի որ հենց պրակտիկայի ընթացքում ուսանողները ավելի լավ են յուրացնում նաև տեսական նյութը, և դասերն ավելի հետաքրքիր ու արդյունավետ են դառնում: Բացի այդ, շատ մոտիվացնող և օգտակար կլիներ, եթե քոլեջի ուսանողները հնարավորություն ունենային որոշ առարկաներ անցնել համալսարանում սովորող ուսանողների հետ, ինչը կխթանի շփումը և փորձի փոխանակումը:
15. aveli shat linen praktikaner labarantneri hamar
16. Ընդհանուր քիմիայի ամբիոն,
17. Դասաժամերը կկրճատեի 💙
18. Կցանկանայի,որ լիներ հստակ նյութ,որով և կանցկացվեին դասերը,ինչպես նաև որոշակի կազմակերպվածություն բոլոր առումներով և հստակություն ամեն ինչի մեջ:
19. Քիմիա Ֆիզիկա Կենսաբ, հագեցած ավելի շատ փորձերով:
20. Կրճատել դասաժամերը, հանել ոչ մասնագիտական առարկաները, ավելացնել ավելի շատ պրակտիկ առարկաներ և նեղ մասնագիտական առարկաներ:
21. Ի տարբերություն մյուս կուրսերի՝ մենք քիմիայի ժամերին դեռևս ոչ մի գործնական փորձ չենք կատարել, թեև լաբորատորիայում առկա են բոլոր անհրաժեշտ սարքավորումները: Կցանկանայինք ավելի շատ կիրառել դրանք գործնականում:
22. Գործնական գիտելիքների ամրապնդում
23. Aveli shat pordzer u praktikanner
24. 1)Քիմիայի ամբիոնում հատկապես տարիքով պայմանավորված, դասախոսները լավ չեն կարողանում բացատրել դասը, նույնիսկ սխալներ են կատարում: Կցանկանայի համալրել քիմիայի ամբիոնը խելացի մասնագետներով: 2)Լաբորատոր ախտորոշում ֆակուլտետի

դասաժամերը օրական 4-ն են, նույնիսկ 5: Դասացուցակը շատ ծանրաբեռնված է: Եթե հնարավոր է, ապա կարելի է կրճատել ժամաքանակները, որ մենք հասցնենք պատրաստվել բոլոր դասերին:

25. Առարկան դասավանդելիս պետք չէ ենթադրել, որ ուսանողները գիտեն այն, ինչը անցել են անցյալ տարի: Օրինակ՝ եթե անցյալ ուստարի մենք ուսումնասիրել ենք օրգանական քիմիա, կամ ընդունվելիս պարապել ենք կենսաբանություն, դա չի նշանակում, որ մենք ամեն ինչ հիշում ենք :")
26. Որոշ առարկաների գործնական գիտելիքների յուրացում:
27. Քիմիային վերաբերող բոլոր առարկաների դասերը միանգամից և կարճ ժամանակահատվածում չէր տրամադրվի, որպեսզի նյութը յուրացվի և ընկալվի: Կավելացնեյի գործնական բժշկական հմտությունների դասավանդում:
28. Հանրակրթական ուսուցումը տեղափոխել քոլեջ ամբողջությամբ կամ մասամբ(օտար լեզու և քիմիա առարկաները) Կազմել հստակ և հաստատված մասնագիտական նյութեր որոնք հասանելի կլինեն ուսանողներին ինչպես օնլայն այնպես ել առկա հարթակներում՝գրադարանում: Նյութերի հաստատման գործընթացում ներառել ինչպես դասախոսների այնպես ել ուսանողների(մենք կարող ենք օգնել քանզի անցնում ենք այդ առարկաները և ավելի լավ գիտենք նյութի և դասավանդման թերությունները և կարող ենք նպաստել դրանց լավացմանը դրա իրագործման սահմաններում) և այդ գործընթացը լինի պարբերաբար (օր.՝սեմեստրի ընթացքում 1-2 անգամ ամեն առարկան) Շատացնել գրադարանում քոլեջի մասնագիտական գրքերի քանակը և տրամադրել դրանք ուսանողներին (առնվազն 0-ից ավել) Շատացնել տրամադրվող տեխնիկան և նյութեր պրակտիկ գիտելիքների համար քանզի բացառապես տեսական գիտելիքները չեն նպաստելու ուսանողների գիտելիքի ամրապնդմանը Հետևել որպիսի դասախոսները պահպանեն քոլեջի կանոնները ինչպես ուսումնառություն որի այնպես ել դասապրոցեսների ժամանակ Շատացնել հիվանդանոցների քանակը որտեղ ուսանողները կարող են սովորել(դա կնպաստի որպիսի ուսանողների գիտելիքները լինեն ավելի լայն) Տրամադրել քոլեջին լսարաններ որոնք չեն օգտագործվում այդ պահերին և այնպես անել որպեսզի ուսանողները Ման չգան ազատ լսարան դաս անելու համար Համալսարանի շատ լսարաններ չեն տրամադրվում քոլեջին քանի որ մենք «Քոլեջ» ենք չնայած նրան որ բոլորը բողոքում են լսարանների զբաղվածությունից ունենալով ազատ լսարան դրանք չեն տրամադրվում: Խոսքը գնում էր ինչպես մեծ այնպես ել փոքր լսարանների մասին Թույլ տալ ամեն ուսանողի ընտրել իր ուզած էլեկտիվ առարկան Ավելացնել հետազոտության հիմունքներ առարկան որպես Էլեկտիվ
29. Դասացուցակի ճիշտ կազմումը,պրակտիկ գիտելիքներ ստանալը
30. Պրակտիկաները շատ քիչա,եթե ավելանա ավելի արդյունավետ հետաքրքիր կլինի

31. Առարկաների սխալ հերթականությունը խանգարում է սովորելու արդյունավետությանը
32. Պրակտիկ դասերի ավելացում
33. Խնդրում տարեց ուսուցիչներին ուղարկել թոշակի,քանի որ նրանք արդեն առողջապես իվիճակի չեն դասավանդելու:
34. Ավելի շատ ժամեր կհատկացնեի պրակտիկ դասերի համար:
35. Ուսման վարձերը շատ թանկ են,մի քիչ իջացնել
36. Կուզեի ամեն ամիս մեկ շաբաթով գնահնք պրակտիկաների տարբեր հիվանդանոցներում ,
37. Պրակտիկ գիտելիքների, անկրաժեշտ պարագաների օգտագործման հասանելիությունը գործնական դասերի ընթացքում
38. Անալիտիկ քիմիայի շրջանակներում բացի տեսական դասերից գործնական դասեր ևս (փորձեր) ևս կատարենք😷
39. Կցանկանայի քոլեջի երեխաները ունենան որոշակի լիարժեք առավելություն հետագայում համալսարան ընդունվելու համար
40. Քաղպաշպանության Դասախոսներին կվերանայեյ
41. Դասերի ժամանակ կավելացնեի խաղեր որոնք տվյալ դասը կդարձնեին ավելի հաճելի ու արդյունավետ,և ուսումնառությունների նվազագույն գնահատականը կդարձնեի 3-ից
42. 1)Քիմիայի մասնագետները հիմնականում իրենց տարիքից պայմանավորված չեն կարողանում դասը լավ և ճշգրիտ ներկայացնել: Բավականին շատ սխալներ են անում, որից դասընթացը արդյունավետ չի դառնում: 2)Լաբորատոր ախտորոշում ֆակուլտետի դասերը ամենօր 4-ն են և գրաֆիկը շատ ծանրաբեռնված է: Կցանկայի հնարավորության դեպքում կրճատել ժամաքանակները, մեր արդյունավետությունը բարձրացնելու համար: